49. ՆԱՃՐԻ ԿՆԻԿ

Կէղի, չէղի նաճարըմ կէղի։ Ինք շատ զանկին կէղի։ Էդ մարդ կհ'ելնի կարգվի։ Շատ խորոտիկ կնիկմ' կը բերե։ Էն խրտար հազ կէնե ուր կնկաց, օր ուր կնկա կշտեն ըսկի չելի։ Մե տարիմ, էրկու էդ տեսակ էնելով հարստութենե հ'ընկավ։

Կնիկ խելացի էր։ Ասեց.—Մա՛րդ, էդ տեսակ չէղի, զիմ հ'ոռ բոներ ես կանի, ի՛նչ, ախբր մզիկ ապրուստ պետք է, հ'ելի գնա քու սանյադի ետև, վերջեն չմնանք խեղճ, էս տեսակով խեղճ կէ-նենք։

— Է,—ասեց մարդ կնկան,—ի՛նչ էնենք, էղեր եմ քզիկ մանշուղ, քու կշտեն մեկ դախա հեռանամ, կմեռնիմ։

Կնիկ ասեց.—Մարամ օր դու շատ մաշուղ ես էղի ընձի, քաշե դիմ սուրաթ, դիր քու ծոցք, առ ու գնա քու հետ, ինչ տեխ օր հ'ընկավ քու միտք, հանե իշքե վրեն ու բանի։

Նաճարն ասեց.—Ալավոկի էդի աղեկ կասե։

Հ'ելավ, քաշեց զկնկա սուրաթ. դրեց ծոցք ու գնաց բանելու։ Զսուրաթ օր էս դրան քաշեց դրեց ծոցք, էկան կանչին՝ հ'ելավ գնաց խաղուն տուն կշիներ։

Կէրթա խաղուն հախ կէնե, կբանի, ուրագրմ կզարկե, կհանե սուրաթ իշքե վրեն ու կդնե ծոցք։

Խազին կիշքե օր էդի բանըմ կհանե ուր ծոցեն, կիշքե վրեն ու կդնե ծոցք։

Ասեց նաճրին.—Ախբեր, նաճրութեն հ'ըմլա չէղնի, էդ ի՞նչ է

սահաթուն դիր մը կթողիս զքու բան ու գործ, բանըմ կհանես քու ծոցեն, կիշքես վրեն ու կդնես ծոցդ։

Նաճարն ասեց.—Իմ կնիկն է, օր չտեսնամ՝ չըմ կռնա աշխատի, քաշեր իմ սուրաթ, դրեր իմ ծոցքս, կհանիմ իշքիմ վրեն էն գահ օր կհ՝ընկնի միտքս ու կդնեմ ծոցքս։

Խազին տեսավ զսուրաթ օղորդ շատ խորոտիկ էր, զմիտք փոխեց, ասեց՝ «Նաճար, վնաս չունի, դու հ՝ըմլա էրի. հ՝եսօր գիշեր զքու կնիկ կչըռպեմ»։

Խազին մնաց հար հ՝իրկուն էղավ, ուրին առավ, բան ու ման տասմալըմ լցեց ու քշեց Նաճրի տուն։

Նաճար շըքի հ՝ընկեր էր օր Խազին կէրթեր ուր տուն, մշկու հետ ճուհապ էրեց կնկան, ասեց՝ «Իմ ախբեր հանդե կիքա տուն, ուրին հըմալ իքրամ մ՝էնե, օր ես չամչնամ»։

Խազին օր գնաց մտավ Նաճրի տուն, կնիկն էկավ դուռ հ՝առեչ, մտավ թևեր, տարավ տուն, նստեցուց վըր խուշթուչի բարձին, դրեց վըր յորղան դոշկին, հարց ու բարով էղան, ասեց.—Դու իմ տեգրն իս։

Խազին ասեց՝ «Հալա տես զէդա կնկա հալ ու հալբաթն, ի՞նչ կէնե, ես էկեր իմ ինչ բանի հ՝ապով, էնի կասե իմ տեգրն իս»։

Ճար կտրավ ասեց.—Ջա՞նըմ, ես քու տեգրն հ՝որի՞ էղա, ես ֆըլան տեխու Խազին իմ, էկեր իմ, ֆըլան բանի հ՝ապով։

Կնիկն կասե.—Էկեր իս, բարով խերով իս էկի, նստի ժղլինք, բան չկա։

Խազին մնաց նստուկ, կնիկն ասեց.—Կելնիմ էրթամ չայ կիտամ էփել։

Հ՝ելավ գնաց, կանչեց զմշակն ու թավլի դին գաղկան հորըմ տվեց փորել։ Օր տվեց փորել խըլըսավ, հ՝ելավ էկավ Խազու մոտ։ Տեսավ Խազու ձեռքեն չը կռնա յախա աղատե, ասեց.—Խազի, հ՝ըմին հ՝ըմին դու զմիտքդ ավիրեր իս, էդա տեխ չէղնի, հ՝ելի էրթանք մեկել հ՝օդեն։

Հ՝ելավ, առավ գնաց Խազին հ՝օդեն, Խազին ընկեր էր հ՝առեչ, ու կնիկ ետև, հորու վրեն լե խըսիլ մ՝էր թալի։ Խազին օր զօտք թալեց, զըրո՛մփ, գնաց հորու մեչ։ Օր գնաց հորու մեչ՝ ռազեց զարեզար ու ֆիղա էնել.—Ի սեր աստծու էղնի, ես հ՝ոդա անոթից կմեռնիմ։

Կնիկն ասեց.—Զվժվժաս, Նաճար քու հոր մշակ չէ բանի բերե դու ուտիս, չուրի զքու սանյաթ չասես, մարդ քզիկ հաց չի տա։

Խազին ասեց.—Ես թագավորի մը խազի իմ, ես ի՞նչ սանյաթ

պիտի գինամ, բան օր գինամ, պզտկունց իմ մամ բամբակ կգզեր, սորվեր իմ։

Կնիկն ասեց.—Էն լե բան մե։

— Է, օր,—ասեց,—հըմալ է,—գնաց անեղըմ, քիչըմ բամբակ ստաավ, բերեց տվեց Խաղին։

Խաղին կգզեր ու օրական լողմեմ հաց ու քիչմ՝ շուրվա կառներ ուտեր։

Խաղին թըղ մնա ուր հալու հետ, մենք դառնանք վըր Նաճրին ու ուր մշկուն։

Մշակ լուսուն հ՝ելավ գնաց Նաճրի մոտ, Նաճար հարցուց.—Խաղին իմա՞լ էղավ։

Տղեն ասեց.—Թալուկ է հոր։

Նաճարն ասեց.—Էնի թըղ էրթա հ՝ոնի աշխատի, ես լե հ՝ոդա, ուրին կաշխատիմ։

Առավ մշկին, հաց ու բան, ինչ օր պետք էր, թողեց էկավ տուն։

Էրկու իրեք օր վերջ Նաճար օր խըլըսավ Խազու յափուից, ըստ հաղ սադրազամ էկավ առավ գնաց։

Էլի ուրագըմ զարկեց, սուրաթ իշքեց։ Սադրազամ տեսավ, ասեց.—Նաճար, էդ ի՞նչ է կիշքես։

Ասեց.—Իմ կնկա սուրաթն է, օր վրեն չիշքեմ, չըմ կոնա բանի։

Ասեց.—Տեսնամ, էդ իմա՞լ կնիկ է, օր քաշեր ես սուրաթ, դրի ծոցք։

Սադրազամ իշքեց, տեսավ օղորթ օր խորոտիկ է, աշկյարա ասեց Նաճրին.—Հ՝էսօր ես պիտի էրթամ քու տան թասալեն, տեսնամ քու կնիկ զէդ պատկեր կաժե՞, թե՞ չաժե։

Նաճարն ասեց.—Կէրթաս, գնա,—մարդ զուր կովու խուլը զիներ։

Մշակ էկավ, Նաճարն ասեց.—Տղա՛, գնա քու խանումին ասա, հ՝էսօր իմ միջնեկ ախբեր կիքա տուն, հ՝ըմալ իքրամըմ էնե օր չամչնամ։

Կնիկն է, զազը ինչ օր պետք էր, աղեկըմ թատարուկ տեսավ։

Հ՝իրկուն օր էղավ, Սագրազամն է, տասմալըմ եմիջ լցեց ու քշեց գնաց Նաճրի տուն, զարկեց զդուռ, մտավ ներս։

Կնիկն օր տեսավ, վազեց[1] էկավ, հ՝ելավ գուս էկավ հ՝առեջ, մտավ թևեր, առավ գնաց ներս, գրեց վըր յորղան դոշկին.—Կը բարով,—կասե,—բարով է էկի իմ միջինեկ տեգր։

---

1 Բնագրում՝ վազեր էկավ (Ս. Բ.)։

Սադրազամ կասե.—Ջա՛նըմ, ես քու տեգը հ՚որի՞ն էղա, ես թագավորի սադրազամն եմ, ֆըլան բանի հ՚ապով իմ էկի։

Կնիկն ասեց.—Ես գինամ դու իմ միջենիկ տեգրն ես, օր իմ միջենիկ տեգր չիս, Սադրազամն իս, ու գեշ մտքով էկեր ես էդա տեխ, բան չկա, գիշեր հ՚երկեն է, կելենենք էրթանք ուտելուց խմելուց վերջ զմեր քեֆ կէնենք։

Թողեց զՍադրազամ նստուկ էդ տեխ, հ՚ելավ գնաց հ՚օդեն, խաղուն թանպիհ էրեց, թը.—Խազի, հերիք է զքու անղան տըզուն հանես, քիչըմ ձեն կտրե ըռհաթ նստի։

Խազին զանղան ձեն կտրեց։ Կնիկ բերեց զխսիլն ու զկուլապ թալեց վըր հորի բերնին ու դառցավ գնաց։ Գնաց վաղիրին ասեց.—Ախըր էկեր իս, էդա տեխ չէղնի, հ՚ելի էրթանք մեկել հ՚օդեն, ինչ քաք կհ՚ուզիս կի։

Տվեց, զվազիրն առավ էկավ։ Օր էկավ զօտք թալեց շեմքեն ներս, պըլսթ, հ՚ընկավ հորու մեջ՝ խազու գլխու վրեն։

Խազին ասաց.—Յա՛, դու ո՛րն ե՞ս, ջարդիր զիմ գլուխ։

Էն լե ասեր.—Դո՞ւ որն ես։

Նի հայեթ զիրար ճանչցան։ Սադրազամ հարցուց խազուց, ասեց.—Դու իմա՞լ իս էկի հ՚օդի։

Խազին ասաց.—Դո՞ւ իմալ իս էկի, ես լե հըմալ իմ էկի։

Սադրազամն օր հ՚ընկավ հորու մեջ, կնիկն հարցուց.

—Քու տեղն անուշ է՞։

Սադրազամն ասեց.—Հա՛։

Ասեց.—Դու զէն մ՚ասի, քու սանյաթ ի՞նչ է։

Սադրազամն ասեց.—Ես սադրազամ իմ, ի՛նչ սանյաթ պիտի էղնի ընծիկ։

Կնիկն ասեց.—Օր հըմալ է, Նաճար քու մշակն չէ[1], բանի, բերե քղիկ կերցու, չաշխատիս, անոթի պիտի մնաս հ՚ոդի, մեռնիս։

Սադրազամն ասեց.—Բան օր գինամ, իմ մեր ճախարակ կըմաներ, պզտկունց սորվեր ենք՝ ես լե կմանենք։

Ասեց.—Բան չկա, էդ լե բան մ՚է։

Սադրազամ թըղ ուր ճախարակ մանե, խաղին լե զուր բամբակ թըղ գղե, մենք գանք մշկու ու Նաճրի վրեն։

Մշակ լուսուն հ՚ելավ գնաց Նաճրի մոտ, Նաճար հարցուց, ասեց.—Աճայեպ աղեկ պարև մը տվի՞ք իմ միջենիկ ախբոր։

---

1 Բնագրում՝ մշակն է բանի բերե (Ծ. Կ.)։

Մշակն ասեց.—Աղեկ պատիվ մը տվինք, հ՝ըմալ օր քանիմ՝ քաղ խաղուց լե հ՝եվելի դնաց հորու տակ։

Ասեց Նաճարն.— Էնտոնց տեղն է, թըղ էրթան, մնան հ՝ոնի։

Նաճար Սադրաղամի յափուն խըլըսավ, ըստ հաղ գնաց վադիրի յափուի վրեն։ Էմ լե զուրագ զարկեց ու իշքեց սուրաթ։ Վազիր տեսավ օր Նաճար[1] ուրագ կը զարկե, սուրաթըմ կհանե ճեպեն ու կիշքե։

Հարցուց ասեց.— Էդ ի՞նչ սուրաթ է կհանես ծոցեդ կիշքես ու դնես քու ծոցը։

Նաճարն ասեց.—Իմ կնկա սուրաթն է։

Վազիր ասեց.—Տեսնա՛մ։

Վազիր իշքեց տեսավ՝ օր խորոտիկ է։

Ասեց Նաճարին.—Հ՝էսօր կէրթամ ծըր տուն, քու կնկա մոտ, տեսնամ օղորդ էդա սուրաթի չափ խորոտի՞կ է։

Մշակն էկավ, թանպիհ էրեց, ասեց.—Գնա իմ կնկան ասե, իմ պղտիկ ախբեր հանդե կիքա տուն, աղեկ պատիվ էնե, չամչնանք։

Մշակ գնաց օր ասեց, կնիկ բերեց թան ու թանճարեն դրեց կրակ։

Հ՝իրկուն օր էղավ, վազիր հ՝ելավ լցեց տասմալըմ չեշիտ-չեշիտ եմիշ ու առավ գնաց Նաճրի տուն։

Նաճրի կնիկ հ՝ելավ դուս հ՝առեջ, մտավ հ՝անթե տակ ու առավ գնաց, յորղան դոշակ թալեց, նստցուց։ Ասեց.— Բարով էկավ իմ պղտիկ տեգր։

Վազիրն ասեց.—Ծուռ է էդա կնիկ, ես ի՞նչ մտքով իմ էկի, էնի կասե՝ «Բարով էկար իմ պղտիկ տեգր»։—Վազիրն ասեց,—Ես բղիկ հ՝ապով իմ էկի, իմ աչքս քի՛ է։

Կնիկն ասեց.— Ինչ կա, ես կասեմ՝ բարով էկար իմ պղտիկ տեգր, դու կասես՝ «Ես հ՝որի՞ էղա քու տեգր, ես էկեր եմ ֆըլան բան հ՝ապով»։

— Էկեր իս, էկի։

Կնիկն հ՝ելավ գնաց մեկ լե խաղուն թանպիհ էրեց, ասեց.— Ջանղան ձեն կտրե, քիչըմ ըռհաթ էրե։

Խաղին ղանղան ձեն կտրեց։ Կնիկ բերեց զխըսիլն թալեց վըր հորու բերնին ու հ՝ելավ գնաց։ Ասեց վազիրին.—Հ՝ելի էրթանք։

Վազիր հ՝ընկավ հ՝առեջ, կնիկն հ՝ետև ու էկան. օր էկան, վազիր զոտք թալեց՝ պըլս՞թ, գնաց հորու մեջ ու հ՝ընկավ Սադրա-

---

1 Բնագրում՝ վազիր ուրագ կզարկե (Ծ. Կ.)։

զամի գլխու վրեն ու խազուն։ Պոռացին.—Էնի ո՞րն է զմըր գլուխ կոտրեց։

Սադրազամ[1] լե շուլկութեն կէներ, հացը կիտեն ուտեր, օր հ'ընկավ, վազիրն ասեց.—Դո՞ւք որն եք։

Հ'իրարու ձենից ճանչցան զիրար։

Վազիրն ասեց.—Դուք հ'որի՞ն եք էկի հ'ոդի։

Սադրազամն ու խազին ասին.—Դու հ'որի՞ն ես էկի, մենք լե էնտոր հ'ապով ինք էկի։

Մշակ լուսուն մեկ լե հ'ելավ գնաց։ Նաճարն հարցուց ասեց.—Իմ ախբեր վազիրն իմա՞լ է։

Մշակն ասեց.—Շատ աղեկ է, էն լե գնաց Սադրազամի ու խազու խեչ։

Ասեց.—Թըղ էրթա, էնդոր տեխ է՛ն է։

Նաճարն է, վաղրի տներ օր խըլըսցուց, գնաց թագավորին կբաներ։

Նաճար գնաց զուր հախ էնեց, մեկ ուրագ զարկեց ու զուր սուրաթ իշքեց։

Թագավոր տեսավ օր Նաճար սահաթուն հեղըմ սուրաթըմ կըհաներ ծոցուց, կիշքեր ու կդներ ծոցք։

Ասեց.—Էդ ի՛նչ սուրաթ է։

Նաճարն ասեց.—Իմ կնկա սուրաթն է, օր չհանեմ իշքեմ վրեն, չըմ կըռնա բանի։

Իշքեց զնաճրի սուրաթ, ասեց.—Նաճար, էդա հ'իրկուն կէրթամ զքու կնիկ իշքեմ, տեսնամ ինչ խդար խորոտիկ ա, օր դու հաղ կէնիս։

Նաճարն ասեց.—Էրթանք, էրթանք։

Հ'ելան իրկուն, առան զիրար ու գացին Նաճրի տուն՝ թագավորն ու Նաճար։

Նաճրի կնիկ էկավ տարավ զթագավոր նստեցուց վերին գին։ Կերան ու խմեցին։

Ուտելուց խմելուց վերջ կնիկն վերուց ասեց.—Թագավոր ապրած, կարելի է հ'ելնինք օլորդինք մըր տներու մեջ, քիչըմ սեր էնե, սորա գնա։

Կնիկ հ'առեջ գացեր էր ասի խաղուն, Սադրազամին ու Վազիրին.—Ըզիկ տեսնամ, հ'ըմալ գզիք, օր ձեն դուրս հ'իգա, թը չէ ձզիկ հաց չըմ իտա ուտեք։

---

1 Բնագրում՝ սխալմամբ վազիր լե շուլկութեն կէներ (Ծ. Կ.)։

Սադրազամն, Վազիրն ու Խազին հմալ կդզեն, օր ձեն կէրթեր դուրս։

Առավ զթագավորն կնիկ, դնաց հ՚օդի դուռ բացեց։

Տեսավ օր անեզի ու ջուլկի մկուկի ձեն կհ՚ելնի էրկինք։

Կնիկն ասեց.—Ես ի՞նչ դինամ, կհ՚ուզիս, հանե դուս իշքե։

Թագավոր հրաման էրեց, հանեցին։ Տեսավ էդա մեկ՝ Սադրազամ, էդա՝ վազիրն է ու էդա մուֆթեն։

Հարցուց ասեց.—Զըզիկ ի՞նչ գործ կա հ՚ոդա։

Կնիկ էդ տեխ մեկիկ-մեկիկ զուր գլխու գալած պատմեց թագավորին։

Թագավոր եբ հասկցավ, հրաման էրեց օր զջալատչիք կանչեն, տանեն Սադրազամի, Վազիրի ու Խազու գլուխ զարկեն։ Ու զնաճար էրեց թաժա վազիր։

Աստծուց հ՚իջավ իրեք խնձոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե անկաճ էնողին։